

ՊԱՐՍԿԱՆԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ ԱՇՈՒՂ ՅԱՐԹՈՒՆ ՕՂԻԻ

(Նրա մահուան Յիսակունի տարով)

I.

Աշուղը

Պարսկահայ յայտնի աշուղներից մէկն է Յարթուն օղին, որ թողել է ընտարական բաական արժեքաւոր երգեր, որոնցով նա մի համեստ էջ է գրաւում պարսկահայ աշուղական գրականութեան պատմութեան մէջ:

Նա այն աշուղներիցն է, որոնք անձանթ են մնացել մեր բանահիւսութեան և բանասիրական աշխարհին: Նրան հաճախ են միայն իր շրջապատում և հարևան գաւառներում: Դրանից դուրս, հայրենեան միւս շրջաններին, նա մնացել է անծանօթ: Նրան վիճակին են ենթարկւել և նրա երգերը: Նրա մահից յիսուն երկար և ձիգ տարիներ են անցել, ամբողջ կէս դար, և չնայած այդքան երկար ժամանակամիջոցին՝ նրա երգերը մնացել են փոշիների ներքոյ, անյայտութեան մէջ, Նրանցից և ոչ մէկը երգչի կենդանութեան օրով լոյս չեն տեսնել:

Նրան ճակատագիրն են ունեցել մեր միջնադարեան երգիչները՝ Կոստանդին Երզնկացի, Մկրտիչ Նաղաշ, Նաղաշ Յովնաթան, ՆահապետՔուչակ, և այլն: Նրանց երգերն էլ ձիգ տարիներ մնացել են անյայտութեան խաւարի մէջ և իրենց կենդանութեան օրով չեն հրատարակւել:

Այդպէս էր հայ իրականութիւնը երէկ, այդպէս է և այսօր...

Կարթուն օղու 50 տարուց աւելի անյայտ մնացած երգերն առաջին անգամ լոյս ընծայեցին 1921 թւին, Նոր Զուգարում, « Աշուղ Յարթուն օղի », Ա. Փարսկանի աշուղական գրականութեանից խորագրերը կրող մի փոքրիկ տետրակով: Այդ թականից նա անցաւ աշուղական գրականութեան պատմութեան գիրքը: Նա

Այլ յորժամ մտաւ Աղեքսանդր յաթոռ կաթողիկոսութեան՝ ի քաց եթող գառաջիմ ընդդիմութիւն իւր, և կալաւ սէր մեծ ըմդ առաքիական գաղթի չորհման, և եցոյց պատիւ լատիմ կրօնաւորաց՝ որք հանդիպեցաւ յէջմիտիմ, և զկնի սակաւուց՝ յամի 1709. ԹժժԸ. ի Փետրուարի 25, յղեաց գիր սիրոյ և յարգութեան առ սրբազան պապն Վիտէն մետաքսներորդ՝ ի դիմաց իւրոց և ի դիմաց համարէմ վարդապետաց և բովանդակ Գոտիմ իւրոյ, յորում բնդունելով զչորհման հայրապետն լինել փոխանորդ քրիստոսի և յաջորդ Գոտիւրի վիմի՝ անուամէ զնա երեցս երջամիկ տիեզերական հայրապետ, և պետական գլուխ, զերիշխանական մեծութիւն, և զերազոյմ մախագահութիւն, հայր հասարակաց քրիստոնէից, և ամենիւնելի չար կաթողիկէ և առաքելական եկեղեցւոյ: Եւ առաջի եղեալ զսէր իւր և զիրարոցմ առ սրբազան զանն չորհման, խմբէր՝ զի ըստ հայրախմամ զթոյմ արժանի աղասցէ առաքել զփոխադարձ պատասխանի յաթոռն սրոյ շէմիտիմի, և մեր ասէ ընկալցոյք զթուղթ Ձեր իւրն զաստուածատուր պատգամս Մովսէսի:

Այս մամակ յորժամ եհաս ի չորհման, անդ գտաւ Յակոբ Վիլլոդ լատիմ կրօնաւոր ի կարգէ Յիսուսեանց, և զի սա ըստ վկայելոյ իւրոյ զամս քսամ և հիմզ շրջեալ էր յաշխարհիմ չայոց և Պարսից, և ումէր փոքր մի տեղեկութիւն հայկական լեզուի, թարգմանեաց ի լատիմ զթուղթ կաթողիկոսիմ՝ թէպէտն ոչ հարազատ իմացութեանով, ու սրբազան պապն Վիտէն զրեաց ի յաջորդ ասի ի Մարտի 15 պատասխանի սիրով առ կաթողիկոսն և ըմդ թղթոյն առաքեաց զմամակ դաստնութեան՝ ստորագրել այմմ. Ուրումք հարկանցիկ գտնել արժամ է, զի Ղազար Զափկեցիմ ասէ ի գիրսն իւր յերես 606, թէ Աղեքսանդր կաթողիկոս գրեալ իցէ « Թուղթ ընդդիմութեան առ Կղեմենդոս փափ Նոսայ », Եւ սակայն Յակոբ Վիլլոդ՝ որ թարգմանեաց զայմ թուղթ, յայտնի վկայէ՝ թէ այմ էր ուղղափառական և սիրալրական, և ոչ դիմադրական. զմոյմ կայէ և իրարցոյ Մարաքիա ժամանակակից, թէ « զրեաց թուղթս սիրոյ առ Վղեմէնդ պապն »:

(Շարունակելի)

ՄԵՐՈՐԴ Զ. ՍԵՔՆԱՆՏ

Տգիտութեան պալատը անոնք են՝ զորս անք կ'անգիտանանք:

ՈՐՊԱԽԵՐ

Ուր որ կրօնք կայ՝ հոն կ'ենթադրուի ամէն բարիք. ուր որ ան կը պակսի՝ հոն կ'ենթադրուի ամէն չարք:

ՄԱԲԻԱՎԷԼԻԻ

կենդանացաւ ժողովրդի հոգում և էլ չի մոռացել:

Այդ թաւականից անցաւ երկու տարի: Այդ ժամանակամիջոցում մենք Յարթուն օղլու մասին ձեռք բերինք կենսագրական նորանոր նիւթեր: Մեր տեղեկութիւններն աւելի հարստացան՝ երբ 1921 թւին Սպա-հանի Չահարմահալ գաւառն ուսումնասիրելու նպատակով շրջեցինք գաւառի հայաբնակ 14 գիւղերը:

Այսօր երբ լրանում է երգչի մահւան 50ամեակը՝ պարզեք ենք համարում մի նոր ուսումնասիրութեամբ նրան ծանօթացնել հայ բանասիրական աշխարհին: Մեր ուսումնասիրութեան հետ տալիս ենք և նրա մի անտիպ երգը. « Օրննոքին իսր-տանեաց »: Դա հարսանեկան հանդիսի շուրջ հիւսւած մի օրհնանք է, որը ձեռք բերինք 1921 թւին՝ Նոր - Զուղայում, մի զրչիս տաղարանից: Այդ երգը առաջին անգամ հրատարակում ենք « Բազմավէպի » մէջ:

Հարսանեկան այդ տաղով Յարթուն օղլու հայերէն երգերի թիւը հասնում է 36ի: Այդ երգերը նրա սիրոյ և տանջանքների, այլ և ժամանակակից կեանքի երգերն են: Այնտեղ երգչին արտայայտել է այն՝ ինչ որ խորապէս զգացել է և որով նա ապրել: Այդ է պատճառը որ նրանք անկեղծ են, զգայուն և գողտոր: Այդ երգերը բոլորում են ոչ թէ միայն երգչի հոգուց, այլ և սիրող ու սիրուող երիտասարդութեան հոգուց: Նրանք արտայայտում են սիրող սրտերի զգացումներն ու յուզերը:

Ահաւասիկ այդտեղ է կայանում Յարթուն օղլու երգերի արժանիքը:

Այսօր նա՝ իբրեւ լիբիք - աշուղ, մի բացառիկ տեղ է զբաղում Պարսկահայ աշուղների մէջ: Յիսուն երկար տարիների ընթացքում դեռ չի եղել ոչ մի պարսկահայ աշուղ, որ գերազանցէր նրան:

Ահա և նրա արժէքը:

Շատ աշուղ ենք ունեցել, Պր. Արամ, ասում էին գիւղի ծերունիները, բայց մինչև օրս Յարթուն օղլու նմանը չենք ունե-

ցել: Նրա սազն ուրիշ սազ էր, նրա գիրը ուրիշ գիր էր: Մենք հպարտ ենք նրանով: Այսօր նա ապրում է գիւղացիների հոգիներում և ապրեցնում նրանց իր հոգով և կրակով: Մշակութանք այդ կրակ հոգու հետ:

II.

Կիսանքը

Յարթուն օղլու աշուղական արժէքը և կատարած դերը լաւ ճանաչելու համար՝ անհրաժեշտ է ծանօթանալ նրա կենսագրութեան և այն միջավայրի ու հանգամանքների հետ՝ որոնց մէջ նա մնել, մեծացել է և ուր զարգացել և կազմակերպւել է նրա աշուղական ծիրը:

Տարաբախտաբար երգչի կեանքի վերաբերեալ կենսագրական որոշ գծեր պակասում են մեզ: Այժմ նրա սերնդից ապրում են թուրք և եղբորդին: Առաջինն իր պապի մասին ոչինչ չի իմանում, իսկ երկրորդը, որ 90 տարեկան մի ծերունի է՝ տուց մեզ կենսագրական մի քանի հարեանցի տեղեկութիւններ, որոնք սակայն չեն պարզում երգչի կեանքի գոնէ բնորոշ գծերը: Նոյնպէս որոշ նիւթեր քաղեցինք գիւղի ծերունիներից: Այդ տեղեկութիւնների մէջ կան և վիպական տարրեր, որոնք առարկայական թիչ արժէք ունին, սակայն և այնպէս մենք նրանց էլ յիշատակում ենք, ամբողջացնելու համար երգչի կեանքի պատկերը: Ահա՛ այդ կեանքը:

Յարթուն օղլին (Յովհաննէս Յարութիւնեան) ծնւել է Պարսկաստանի Սպահան նահանգի Չահարմահալ գաւառի Ասաղաբաղ գիւղում, մոտաւորապէս 1789 թականին, մի համեստ շինականի ընտանիքում: Նրա հայրը եղել է հոգազոր՝ նա աշխատել է և իր քրտնաշան վաստակով հայթայթել իր ընտանիքի ապրուստը: Առխատասէր մայրը, նման բոլոր հայ գեղջկուհիների՝ օգնել է իր ամուսնուն երկրագործական աշխատանքների մէջ:

Թէ ծնողներն ինչպիսի՞ ազդեցութիւն

ունեցել են երգչի հոգեկան աշխարհի վրայ և թէ ընտանիքում ինչպէս է անցել նրա մանկութեան շրջանը, և ինչ տեսակ տպատւութիւններ է կրել նա այդ շրջապատից՝ դժբախտաբար տեղեկութիւններ պակասում են: Այսօր միայն պարզ է՝ որ Յարթուն իր օրերը մեծ մասամբ անց է կացրել աշխատանքի դաշտում: Նա իր ծնողների հետ գնացել է հանդը և օգնել նրանց վար ու ցանքսի մէջ: Գիւղական աշխատանքների ժամանակամիջոցին համարեա նա միշտ եղել է բնութեան ծոցում: Այնտեղ նա անվերջ դիտել է կապոյտ երկինքը, արեգակը, լողացող ամպերը, որոտը, կայծակը, դիտել է գոյնզգոյն ծաղիկները, կարկաչուն աղբիւրները, քչքչան վտակները, թռչունները, և այլն: Բնութեան այդ բոլոր գեղեցիկ երևոյթները նշանակելի ազդեցութիւն են ունեցել նրա մատաղ հոգու վրայ: Այդ ազդեցութիւնը նկատուում է գլխաւորապէս նրա սիրոյին և այլաբանական երգերի մէջ: Նա ետքի գովասանքն անելիս՝ յաճախ օգտուում է բնութեան պատկերներից: Այսպէս իր ետքի դէմքը նկարում է հետեւեալ պատկերով.

«Վարթ երեսդ բադը ա էլել,
Թամամված լոյսնիակի պէս»:

Կամ հետեւալ երկտողը, ուր այնքան գեղեցիկ պատկերով է գծում ետքի դիմագիծը.

Աթոք գուլալ, ունթոք կամար,
Լոյս երեսդ շամս ու դամար»:

Իր սիրելու գեղեցկութիւնը գծելիս՝ նա վերցնում է նաև բնութեան երփներանգ ծաղիկները, ինչպէս օր. «Սուսան — սլմբուլ», «Վարդ — եսսաման», «Ռէհան», «մխակ» և այլն: Ահա մի պատկեր.

«Թշերդ կարմիր վարդ...
Պռննիդ բալասան ծաղիկ...
Ձիաղներդ սառն անոշ աղբիւր...»

Սրտիս մէջն շիրին ջան իմ,
Սուսան ու սմբուլ, Ռէհան իր»:

Թէև Յարթին օղու ծնողների մասին տեղեկութիւններ պակասում են մեզ, բայց երևում է՝ որ նրանք եղել են ուսումնասէր և զրասէր մարդիկ: Նրանք իրենց զաւակին յանձնում են Տէր-Յովհաննէս քահանայի դաստիարակութեանը, որ գիւղում աչքի էր ընկնում իր զրագիտութեամբ:

Այդ ժամանակաւ Պարսկաստանի գիւղերում, ինչպէս այսօրւայ շատ խաւար գիւղերում, դպրոցներ չկային: Խուրացան չիւր գիւղ ունէր իր տիրացու «գիտնական» գրագիրը կամ քահանան, որի մօտ ուսանում էին գիւղի պատանիները: Հին, սքոլաստիկական մանկավարժութեան շրջանն էր դա, և այդ շրջանում էլ զարգանում և կազմակերպւում էին գեղջուկ պատանիները: Դրանց մէկն էր և Յարթունը: Նա ժամանակի պահանջի համաձայն՝ դառնում է Տէր-Յովհաննէսի հիւն և հաւատարիմ աշակերտը, որպէս զի նրա նից մի քիչ լոյս ստանայ: Բայց տեսնե՛ք ինչ կրթութիւն է ստանում պատանի Յարթունը իր ուսուցչի մօտ: Քահանան նրա ձեռք տալիս է կարգալու Նարեկ, Աւետարան, Սաղմոս, աղօթագրքեր, եկեղեցական շարականներ: Յարթունը զարգանում է այդ գրքերի ընթերցանութեամբ և կազմակերպւում է նրանց ազդեցութեան ներքոյ: Քահանայ-ուսուցիչը, իբրև հոգեւորական, դաստիարակում է իր սանին կրօնական ուղղութեամբ: Այդ ազդեցութիւնը նկատուում է այսօր նրա կրօնական երգերի մէջ: Սակայն Տէր — Յովհաննէսի մօտ Յարթունը շատ երկար չի մնում, մի քանի տարուց յետոյ վերջանում է նրա ուսման շրջանը: Այդ դպրոցից նա դուրս է գալիս մտաւոր շատ աղքատիկ պաշարով: Այնուհետև սակայն նրա առաջ քացւում է մի նոր դպրոց: Դա աշուղական դպրոցն էր: Այդ ժամանակաշրջանում Պարսկաստանը բաւական հարուստ էր աշուղներով: Այդ աշուղները շրջում էին գաւառից գաւառ, գիւղից գիւղ և ժողովրդի մէջ տարածում իրենց ստեղծագործութիւնները: Նրանցից յայտնի էին Ամիր օղլի, Դուլ Թովհաննէս, Բադեր օղլի, և

այլն: Նրանք այցելում են նաև Չահաբ-մահալ գաւառը-և իրենց ընտրի լարերով ուրախացնում գիւղացիներին: Յարթունք լայն չափով օգտւում է այդ գեղեցիկ հանգամանքից, որ մեծ²դեր է կատարում նրա աշուղական կեանքի կազմակերպութեան գործում: Նա³ աշուղների մօտ գնալով՝ աշաղորութիւն է դարձնում իւրաքանչիւր աշուղի խաղի վրայ և շնորհիւ իր ընդունակութեան՝ շուտով սովորում է աշուղութեան արուեստը: Նա միաժամանակ անգիր է անում աշուղների երգերը: Ծնողներն իրենց գաւազի առաջադիմութիւնը թանկելով՝ յանձնում են նրան աշուղ Ղուլ Յովհաննէսի խնամքին, որ այդ շրջանի յայտնի աշուղներիցն էր: Նա մեծապէս Քաղզում է իր աշակերտի հոգու վրայ և նրա աշուղական արուեստի զարգացման գործում դնում իր դրոշմը: Յարթունք նրա մօտ աշակերտում է մի քանի տարի և ապա՝ իր ճարտար գրչով գեղարձանցում է նրան: Սակայն երգիչը Ղուլ Յովհաննէսի դպրոցով էլ չի բաւականանում: Նա ձգտում է աւելի կատարելագործել, աւելի բարձրանալ: Այդ ձգտումը նրան դարձնում է թափառական: Եւ նա կտրելով անագին տարածութիւններ՝ Նոր-Չուղայից անցնում է Ս. Էջմիածին: Դա մի դժուար և ծանր ճանապարհորդութիւն էր որ կատարում էր երգիչը, կրակած ուսման տենչով: Էջմիածինը Հայերի ամենազլխաւոր վանքն էր, որ այտնի էր իր զպրոցին: Այդ դպրոցն էին դիմում բազմաթիւ գաւառներից և գիւղերից հարիւրաւոր ուսումնասիրու պատանիները: Յարթունք դրանցից մէկն էր: Թէ նրան յաջողւում է զպրոց մտնել և թէ այնտեղ ինչքան ժամանակ է մնում և ինչպէս է անցկացնում իր օրերը՝ տեղեկութիւններ պակասում են: Էջմիածնից նա այցելում է վան, վարազ, Աղթամար, ապա գնում է Ս. Կարապետ ուխտի՝ աշուղական շնորհք ստանալու համար: Գիւղացիների պատմելով՝ գիշերը նա երազ է տեսնում: Մի ջահէլ մարդ, իրր թէ Ս. Կարապետը, նրան մի բեռ եփած կորեկ է տալիս, որ տանի սարի գագաթը: Նա

չալակում է կորեկը և բարձրանում սարի ծայրը: Այդ յաջող վերելքը նշան է համարում՝ որ ինքը Ս. Կարապետից ստացել է աշուղական շնորհքը: Անուհետեւ նա վերադառնում է հայրենի գիւղը: Գիւղի ժողովուրդը դիմաւորում է նրան և մեծ պատով ընդունում իր սիրելի աշուղին: Նա իր հայրենակիցներին, իրր նւէր, սատափէ խաչեր է բերում հայկական սրբավայրերից: Դրանից յետոյ սկսում է նրա աշուղական գործունէութիւնը: Նա ձեռք առնելով չօնգուրը, ընկնում է գիւղից գիւղ, երգեր է յօրինում և մրցում գիւղական աշուղների հետ: Շուտով է տալիս իր ձեռքի ու ընտրի համբար: Նա աչքի է ընկնում իր աննման ձիրքով. յանպատաստից երգեր է հիւսում և զարմանք պատճառում ժողովրդին: Իրր ասուով՝ նա շրջում է բազմաթիւ քաղաքներ և դէրվիշի նման թափառական կեանք վարում, ինչպէս ինքն է յիշատակում իր «Մատուռ» երգ »ի մէջ.

«Ես Յարթուն օղին ամ, չստես յուրիչ ամ,
Թամամ աշխարհ ման ամ գալիս, դարձիչ ամ»:

Գիւղացիները Յարթուն օղուն նկարագրում են բարձրահասակ, յաղթանդամ, սպիտակ պարթև մօրուքով, լայն թիկունքով և ուժեղ բազուկներով: Նա քողէ գդակը գլխին, արխալուխով, թումբանով և կապիւրով, մէջքին երկայն գօտի, ոտքերին կիլիւմ, չօնգուրը միշտ արայի տակ անպաճոյճ մի աշուղ է եղել ու հակառակ իր ծերութեան ունեցել է քաղցր և դուրեկան ձայն. իսկ բնաւորութեամբ եղել է զգայուն, ջղային և դիւրագրգիռ: Նրա դիւրագրգիռ բնաւորութիւնը բնորոշող ապացոյցներից հետաքրքրական է հետևեալը: Մի անգամ նա Չահաբմահալ գաւառի Լիվաւան գիւղից ճանապարհւում է դէպի Մամուզա գիւղը: Ճանապարհին տեսնում է՝ որ մի խումբ գիւղացիներ նստել են մի արտի եզրին և երգում են իր յօրինած երգերը, բայց աղաւաղած ձևով: Նա սաստիկ զայրացած՝ ցած է գալիս իշու

վրայից և սկսում է ոչնչացնել նրանց նոր ջրած արտը. երբ հարցնում են պատահա՞ր՝ բարկացած պատասխանում է. « Դուք ինչո՞ւ եք օչնացնում իմ խողերը, թե սփյուռ եք, իսկ լաւ սփրեք »: Գիւղացիները մի կերպ հանգստացնում են նրան և ճանապարհ դնում:

Իրեւ ջղային մարդ՝ նա շատ անգամ էլ ծեծել է իր կնոջը:

1869 թվին խամրում է նրա կեանքը: Հետաքրքրական է նրա մահւան պարագան: Վրթանէն քննչ. Մանսուրեանի ա. սելով՝ երգիչը նախագգում է իր մահւան օրը: Վերջին գիշերը նա իր բոլոր ազգականներին հրաւիրում է իր տունը և մինչև կէս գիշեր չոնգուր ածում ու երգում: Ապա բոլորին օրհնելով՝ համբուրում և արտասուելից աչքերով վերջին հրաժեշտն է տալիս ասելով. « Դուք գնացե՛ք. — մնաք բարով, — բայց ասաստը ինձ մեռած կը տեսնէք »: Լուսադէմին նա աւանդում է իր հոգին:

Չահարմահալի Մամուզա գիւղի հարաւ արեւելեան կողմում մի գերեզմանատուն է փռւած. դա գիւղի հին գերեզմանատունն է, որի հարաւային կողմից հոսում է գիւղի առակը: Այժմ այդ գերեզմանատունն է հանգչում պարսկահայ աշուղական զրականութեան լիրիք — երգիչը: Նրա հողակոյտի վրայ զրած է կլոր, անտաշ մի փոքրիկ քար, որը ո՛չ մի արձանագրութիւն չունի: Այդպէս են և մեր միջնադարեան աշուղներից շատերի դամբարանները: Նոյն դմբախտ վիճակին է ենթարկւած Յարթուն օղու գերեզմանաքարը: Գիւղի ծերունիները օտարական ամէն մի այցելուին առանձին հպարտութեամբ են ցոյց տալիս այդ քարը:

Այդ անտաշ քարի վրայ քանդակենք այստեղ Սայեաթ—Նոփայի նւիրած հետեւեալ անպաճոյճ տողերը.

« Դուրթ է միզանից հիւսացաւ,
Զինք մոռնայ յիշտակը.
Մէջլիսներուն շատ պակսեցաւ՝
Քաղցր բլբուլն ու սոխակը »:

Ահա այն ամէնը, ինչ որ գիտենք Յարթուն օղու կեանքի մասին: Բայց նրա կեանքի պատկերը լրացնելու համար գծենք և այն միջավայրը՝ ուր նա սնւել, մեծացել է և որտեղ ազդեցութիւններ կրել:

III.

Միջավայրը

Յարթուն օղին սնւել և մեծացել է զխաւորապէս Սպահանի Չահարմահալ գաւառում: Դա Պարսկա — Հնդկաստանի թեմի հայաշատ և կարեւոր գաւառներից մէկն է, ուր այսօր ապրում են մօտաւորապէս 13,000 հայ աշխատաւոր գիւղացիներ: Դրանք բնկորներն են այն մեծ գաղթականութեան՝ որ տեղի ունեցաւ 17րդ դարում, 1606 թվին, Շահ—Աբբասի ձեռքով: Երեք դարերից ի վեր նրանք կենդրոնացել են Պարսկաստանի հողի վրայ և իրենց հէլալ աշխատանքով զարկ տւել գաւառի տնտեսութեան: Սակայն չնայած դրան՝ նրանք տնտեսապէս միշտ էլ գտնւել են ողբերգական պայմանների մէջ: Իսկ դա հասկանալի պատճառով. Չահարմահալը Պարսկաստանի այն խուլ, յետ ընկած գաւառներից մէկն է, ուր անփոփոխ ծաւալւած է դարերի դմբախտ իրականութիւնը: Այնտեղ դեռ կաւաճատէր ինքնիշխան խաներն ու առարներն են իշխում, իրենց սանձարձակ բռնակալական ճնշումներով, մի գաւառ՝ ուր ոչ մի հաստատուն օրէնք չկայ, ուր բացակայում է արդարութիւնն ու խիղճը, ուր կեղեքումներն ու հարստահարութիւնները սովորական երեւոյթ են կազմում: Շատ քնական էր՝ որ այդպիսի հանգամանքների մէջ գիւղացիները չպիտի կարողանային վայելել իրենց դառ նըրտիքի արդիւնքը: Այդպէս են ապրել նրանք ամբողջ երեք դարեր: Իսկ մինչև այսօր էլ դեռ հեծում էր նոյն միջնադարեան ճորտական կարգերի, կամայական ծանր հարկերի և տնտեսական ճնշող ու քայքայիչ պայմանների մէջ: Նրանք աշխատում են, տքնում, արտադրում, բայց

դարձեալ քաղցած են՞ դարձեալ կիսամեկ, որովհետեւ տէրը չ'են իրենց իրաւունքին, իրենց աշխատանքին. նրանք հորոհեր, ստորով—ոռայեաններ են: Այդպէս են վճռել նրանց ճակատագիրը գիւղական հարկււրատըր գիշատիչ տէրերը, որոնք օրէց օր արիւնաքամ են անոււմ խեղճ գիւղացիներին: Բայց պատկերը դրանով չ'ի վերջանում: Գիւղացիների կեանքը դառնացնում են նաեւ աւազակային հարստահարութիւնները, որ այնքան սովորական երևոյթ է այդ դժբախտ գաւառում: Այս բոլորի վրայ աւելացնենք և այն խաւարն ու տգիտութիւնը, որ իշխում են աշխղթելիօրէն բոլոր գիւղերում: Ամբողջ գաւառում չ'են եղել և մինչև օրս էլ դեռ չ'կան օրինակելի փառնաւոր դպրոցներ, որ նպաստէին գիւղացիների մտաւոր, բարոյական դաստիարակութեանը: Կուլտուրայէս քարացած այդ միջավայրում գիւղացիները մնացել են յետամնաց վիճակի մէջ, տգէտ ու անուս, թաղւած նախապաշարութեանի և անշարժութեան մէջ:

Ահա մի այդպիսի կորած և խաւար միջավայրի ու շրջապատի մէջ է սնւել և մեծացել Յարթունը և այդտեղ էլ յօրինել իր երգերը: Այդ միջավայրը նրան շատ բան չ'ի տւել, բայց յաճախ այնտեղ են եկել մի շարք աշուղներ և երգել ու նուագել: Նրանց քնարի լարերից ներշնչւել է Յարթունը և որոշ ազդեցութիւններ կրել: Նրա վրայ ազդել են պարսկահայ աշուղներից Ղուլ Էգազը, Ղուլ Արզունին, Ամիր օղլին, Բաղըր օղլին և նա մանաւանդ Ղուլ Յովհաննէսը: Նա ազդւել է նաեւ պարսիկ բանաստեղծութիւններից: Երևում է, որ նա ծանօթ է եղել արևելքի մեծ քնարերգուներին՝ Հաֆիզին, Ֆիրդուսուն, Սաադին և ներշնչւել է նրանց մօտիւններից: Յատկապէս ազդւել է Ֆիրդուսուն «Շահնամէից»։ Նա իր «Լոյսիակի պէս փայլում ու» խորագրով սիրային երգի մէջ յիշատակում է Շահնամէի դիւցազնները՝ Ռօստամն ու Զաւրը:

Ի՞նչ արդեօք Յարթուն օղլին ուրիշ տպաւորութիւններ և ազդեցութիւններ կրե՞լ է

իր կատարած ճանապարհորդութիւնից. արդեօք գեղեցիկ վանք, վարազը, Աղւաթաւը, Էջմիածինը, Ս. Կարապետը նրա հոգու վրայ դրել են որևէ դրոշմ, մենք դժարանում ենք որևէ կարծիք արտայայտել, քանի որ այդ մասին երգերի մէջ ո՛չ մի յիշատակութիւն չ'կայ և մեր ձեռքում էլ չ'ունենք ուրիշ աղբիւրներ, որով, առ այժմ, բաւականանում ենք այսօր ցանով:

ԱՐՄ ԵՐԵՄԵԱՆ

(Շառաբարիկ)

ԼԵԶՈՒԱԳԻՏՈՎՈՆ

ՀԱՅՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

Ժ Ա Մ Ա Գ Ր Ք Ի Մ Է Ջ

(Վ. Ղըշտ. 1903)



«Այնպիսի «անգանազանի, ոչ—տարբեր, նման կամ հաւասար»։ Բաշխեազնացն մաքրական, Զարինդը բմպել տասսոսական, Հանես ի վեր գերաստիճան, Յիմանալեացն անբոկական (էջ 960), առնուած է Տաղարանէն»:

Հոնրատեղ «ամենուն փափագելի»։ Յնծայ և զուարճանալ եկեղեցի սուրբ, տօնելով մեծաւ հանդիսիւ զհանրատեղ յիշատակս քո (էջ 592):

Յանձնաւելի «յանձն առնելիք և կատարելիք բան»։ Այլ և մեղայ ամենայն պատուիրանացն Աստուծոյ, յանձնառնելեացն և հրաժարելեացն, զի ո՛չ զյանձնառական կատարելիք և ո՛չ ի հրաժարելեացն հեռացայ (էջ 9)։ — Դրանօթ բառ է, բայց իբրեւ երկու բառ (յանձն առնելի) համարելով՝ մոռցուած է բառաբանին մէջ առնելու:

Ուղիղի «նուիրաբերել, ընծայաբերել, զոհնել»։ Այլ զողալով առաքինաբար զինքն ուղերձեալ (տպ. շղերձեալ) ի յանիւս աստուածային զանձուցն հոլովիցի աղաղակելով առ Քրիստոս (էջ 604):